

մասնաժողովին հաղորդած տեղեկութիւնները եւ կու գայ հետեւեալ որոշման¹². «Եթէ Հայոց Դպրանոցի համար կարեւոր չէնք, բնակարանն եւ կարասիները գնուին, կարելի պիտի ըլլայ անմիջապէս կազմակերպել 405 աշակերտի համար Դպրանոց մը, օգտուելով Միւրայի արքեպիսկոպոսի դրամագլխին 150 սկուդ շահոյքն եւ Հիւրանոցի 250 սկուդ հասոյթովը, որ պաշտօնէից վրայ անօգուտ կը ծախսուի» եւն:

Ս. Ժողովը իւր 1633, Յունուար 5ին առ խոջայ Նազար Թղթին մէջ կը գրէր. «Կը մնայ այժմ, որ Դուք եւ Զուղայի հայ վաճառականները այս քաղաքի մէջ Ձեր Աղգին համար բացուելիք Դպրանոցի ի նպաստ ընէք այն, ինչ որ Ձեզ կ'իյնայ: Ես կը վստահացնեմ Ձեզ եւ հայ վաճառականներուն, որ այս պիտի ըլլայ ի մեծ ծառայութիւն Աստուծոյ եւ ի փառս եւ յօգուտ համօրէն հայ Աղգին» (տե՛ս էջ 389):

Ս. Ժողովի տրամադրութեանց եւ որոշմանց մասին Զուղայեցիներու հետ բանակցութիւնները պիտի վարէր Յովհ. Թադէոս Սպահանի եպիսկոպոսը: Անոր եւ Մովսէս կաթողիկոսի գրեթէ միաժամանակ վախճանելովը, բանակցութիւնները խափանուեցան: Զուղայեցիները լռեցին:

Մնաց Ս. Ժողովին վերադառնալ իւր նախկին ծրագրին, սահմանեալ թուով աշա-

¹² Prop. Persia etc., an. 1648 inclusive, vol. 209, f. 298.